ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 02.11.2018թ. N 315/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.11.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Օսիպյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Դեմիրչյանը, Մ.Կարապետյանը, և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղը զբաղեցրած Դավիթ Քոչարյան ԱՁ-ի և ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգով ներկայացված փաստաթղթերը արձանագրեց, որ Դավիթ Քոչարյան ԱՁ–ն Հավելված-2-ում նշել է, որ կից ներկայացնում է նաև գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, համատեղ գործունեության պայմանագրի պատճենը և սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, սակայն այդ փաստաթղթերը բացակայում են, իսկ ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը համակարգում չէր կցել Հավելված-2-ը :
-Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի 7.16 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել Դավիթ Քոչարյան ԱՁ-ի և ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:
Հաջորդ նիստը հրավիրել 2018թ. նոյեմբերի 23-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Օսիպյան

Անդամներ՝ Լ.Դեմիրչյան

Մ.Կարապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան